ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
22 ապրիլի 2024 թվականի N 142 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 8 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԷԴԳԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՀՐԱՆՈՒՇ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 124-րդ հոդվածի 2.1 և 4-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարի ծանուցագիրը և «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Էդգար Հարությունյանին 2024 թվականի ապրիլի 23-ից մայիսի 17-ը ներառյալ ազատել աշխատանքային պարտականությունների կատարումից՝ վարժական հավաքին մասնակցելու նպատակով:
2. «Կապանի թիվ 8 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալ Հրանուշ Հայրապետյանին:

2024-04-22 16:16:47 GMT+4
Հաստատված է ԷԿԵՍԳ-ի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. ապրիլի 22